

ԴԵՊԻ ՄՈՒԹ ՀԵՌՈՒՆ...

(Ա. Անդրեվից *)

Սրդէն չորս շաբաթ էր նա բնակւում տան մէջ,—և չորս շաբաթ տան մէջ թագաւորում էր երկիւղ և անհանգստութիւն։ Ամենքը աշխատում էին խօսել և գործել այնպէս, ինչպէս միշտ էին գործում ու խօսում, և չէին նկատում, որ իրանց խօսակցութիւնը աւելի խուլ էր նաչում, որ իրանց աշքերը մեղաւոր ու երկիւղով էին նայում ու մերթ պտոյտ էին անում գէպի այն կողմը, որտեղ պատրաստուած էր սենեակ նրա համար։ Տան միւս, հակառակ ծայրում քայլում էին անբնական պինդ և նոյնպէս անբնական բարձր էին ծիծաղում, բայց երբ որ գէպի էր պատահում անցնել սպիտակ գոների մօտից, ամբողջ օր ներսից փակուած էին և այնպէս խուլ, կարծես յետեից կենդանութեան նշոյլ չը լինէր, նրանք մեղմացնում էին քայլերը և նրանց ամբողջ մարմինը մի կողմն էր թեքւում, կարծես սպասում էր մի որ և է հարուածի։ Եւ թէպէտ անցնողները ոտի ամբողջ թաթով էին շիտում յատակին, բայց նրանց քայլը աւելի թեթև և աւելի անձայն էր, քան եթէ նրանք ոտների ծայրերի վրայ անցնելիս լինէին։ Եւ ոչ ոք նրան չէր կանչում իր անունով, այլ հասարակ-խօսքով «նա» և որովհետեւ ամենքն էլ ամեն ըոպէ մտածում էին նրա մասին, այդ անորոշ կոչն աւելի պարզ էր երեսում, քան նրա անունը, և առիթ չէր տալիս կրկնն հարցնելու Մի տեսակ կարծես անպատկառ էր և մտերմական կանչել նրան այնպէս, ինչպէս ուրիշներին։ իսկ «նա» խօսքը ուղիղ և կարուկ արտայայտում էր այն վախը, որ նրա բարձր ու մոայլ կերպարանքը ներչնչում էր։ Միմիայն պառաւ նանին, որ բնակւում էր վերեի

*) Ա. Անդրեվիլ վերջին հինգ տարուայ ընթացքում երեան եկած ուս տաղանդառ գրողներից է։ Նա իր պատմուածքները նուիրում է Մ. Ֆորկունի նր պատմուածքներում նա շօշափում է ուսաց կեանքի այսպէս կոչուած «անիծեալ ինդիրները»։

յարկում, անուանում էր նրան Կօլեա, բայց նա էլ զգում էր լարուած դրութիւն երկիւղից և ամբողջ տունը թափանցող մի գիբախտութեան սպասողութիւնից, և շուտ շուտ լաց էր լինում: Մի անգամ նանին հարցրեց աղախին կատեայից, թէ ինչո՞ւ օրիորդը չէ նուագում պիհանօի վրայ այսօր, բայց կատեան զարմացած նայեց նրա վրայ և պատասխան չը տուեց, ու հեռանալով գլուխը շարժեց, կարծես, նոյն իսկ հարցը հաւանեմիս չը լինէր:

Եկաւ նա նոյենմբերի մի մոխրագոյն կէսօրին, երբ ամենքը տանն էին ու նստած էին թէյի. միայն Պետեան արդէն վաղուց դնացած էր գիմնազիա: Դուրսը ցուրտ էր և քաշ եկած թանձր ամպերը անձրե էին մաղում, այնպէս որ, չը նայած մեծ լուսամուտներին, բարձր սենեակներում մութ էր, իսկ մի քանիմերում մինչեւ անգամ ճրագ էր վառուած: Նրա տուած դանցը կտրուկ էր ու տիրապետող, և ի՞նքը՝ Ալեքսանդր Սնտօնօվիչը ցնցուեց: Նա կարծեց, թէ եկել է նշանաւոր այցելուներից մէկը և հանգարտ առաջ գնաց հանդիպելու, իր թուխ և լուրջ երեսին շինելով փայփայող ժափիտ: Բայց այդ ժպիտը իսկոյն թուաւ, երբ կիսամութ նախասենեակում նա տեսաւ աղքատ ու կեղտոտ հազնուած մի մարդու, որի առաջ շփոթուած կանգնած էր աղախինը ու երկչոս ձեռվ փակում էր ճանապարհը նրա առաջ: Երեխ երկաթուղու կայարանից նա եկել էր ոտոպ ու տեղ տեղ միայն ձիաքարշով, որովհետեւ նրա կարճ մաշուած վերարկուն թաց էր, իսկ վարտիկը ներքի ցեխոտուած էր և ճիլուել էր ջրից ու ցեխից: Նրա ձայնը խոպուտ և կոպիտ էր, կամ մրսելուց և խոնաւութիւնից, կամ թէ երկար լուսութիւն պահելուց օրօրուող երկաթուղում:

—«Ի՞նչ էք լոեր! Տանն է, հարցնում եմ ձեզնից, Ալեքսանդր Սնտօնօվիչ Բարսուկօվը»: Կրկնեց իր հարցը ներս մտնողը, Բայց ձայն չարձակեց Ալեքսանդր Սնտօնօվիչը: Զը մտնելով նախասենեակ, նա կիսապայոյտ նայեց մարդու վրայ, համարեց նրան անթիւ խնդրողներից մինը ու խստութեամբ ասաց: —«Քեզ ի՞նչ է այստեղ հարկաւոր»:

—«Զը ճանաչեցիր, հայր»: Քիչ հեգնական, բայց դողը ձայնում, հարցրեց մտնողը: —«Ես իսկ Նիկողայոսն եմ, հօրս անունով Ալեքսանդրօվիչ»:

—«Ի՞նչ... Նիկողայոս»—մի քայլ յետ քաշուեց Ալեքսանդր Սնտօնօվիչը. բայց հարցնելիս նա արդէն գիտէր, թէ ինչ Նիկողայոսն էր կանգնած առջև: Աղայութիւնը թուաւ նրա երեսից և երեսը դարձաւ գունատ սարսափելի պառաւային մահանման գունատութեամբ, և ձեռքերը բարձրացած կրծքին, որտեղից

յանկարծ դռւրս եկաւ բոլոր օդը։ Հետևեալ բուռն ձգտումով զոյդ ձեռները գրկեցին Նիկողայոսին, ու ճերմակ փայփայած մօրուքը կպաւ, սև թաց, փաքրիկ մօրուքին և համբուրելու սովորութիւնից յետ սովորած ծերացած շրթունքները որոնում էին երիտասարդ թարժ շրթունքներ և անյագ ազահութեամբ սեղմում էին նրանց։

—«Սպասիր, հայր, թոյլ տուր շորերս հանեմ», մեղմ ասում էր Նիկողայոսը։

—«Ներեցիր, ներեցիր, դողդողում էր ամբողջ մարմնով Ա. Ա. չը»։

—«Ե՞ն, այդ ինչ յիմարութիւն է։ խիստ ու կամաց ասաց Նիկողայոսը, յետ քաշելով հօրը—«Էլ ինչ ներում»։

Երբ որ նրանք մտնում էին սեղանատունը, Ա. Ա. չը ամաչեց իր բռնկումից, որին նրա բարի սիրտը այնքան անզըսապելի ոյժով անձնատուր եղաւ։ Բայց տեսութեան ուրախութիւնը թէպէտ թունաւորուած եռում էր նրա կրծքի մէջ և եղք էր որոնում, և որդու պատկերը, որ ամբողջ եօթը տարուայ ընթացքում ով զիտէ որտեղ էր թափառել, հօրքայլուածքը դարձնում էր արագ և երիտասարդ ու շարժուածքները բռւռն և ոչ ծանրաբարոյ։ Եւ նա սրտանց ծիծաղեց, երբ Ն-որ կանգնեց քրոջ առաջ և արորելով իր սառած ձեռները, հարցրեց,

—«Իսկ այս օրիորդ—քոյրիկս է հայ»։

—Նինօչկան, 17 տարեկան օրիորդը, գունատ և նիհար, իր տեղում կանգնած էր, ու երկշոտ խաղում էր մատներով սեղանի վրայ, նետելով եղքօր վրայ իր մնձ վախեցած աչքերը։ Նա հասկացաւ, որ դա Նիկողայոսն է, որին նա աւելի էր յիշում, քան ինքը հայրը, և ինչ անել հիմա, չէր իմանում։ Եւ երբ Ն-որ, համբոյըի տեղ սեղ սեղմեց նրա ձեռքը, նա պատասինաց ամուր սեղմելով և քիչ էր մնում որ բևկերանս անէր նրա ըստ ինստիտուտի սովորութեան։

—«Իսկ սա պ. ուսանող է, Անդրէյ Եգորիչ—Պեղեայի վարժապետն է»—ծանօթացնում էր Ա. Ա. Ա. չը։

—«Պեթկա—զարմացաւ Նիկողայոսը—նա արդէն սովորում է, հիանալի է»։

—Յետոյ նրան ծանօթացըին մի սուր զէմքով կնոջ հետ, որը թէյ էր ածում և որին ամենքը անուանում էին Աննա Իվանովնա, և ապա բոլորն էլ աղահութեամբ սկսեցին զննել Նիկողայոսին, մինչև որ նա իր կողմից սենեակն էր զիտում, ուղում իմանալ, արդեօք բոլորը այնպէս է, ինչպէս և տարի առաջ, Նիկողայոսի մէջ կար մի ինչ որ տարօրինակութիւն, որ որոշման չէր ենթարկւում։ Բարձր հասակով, զլխի հապարտ

շարժումով սև աչքերի ներս թափանցող հայեացքով դուրս
ընկած ոլոր յօնքերի տակից նա յիշեցնում էր ջաճիլ արծիւն։
Վայրենութիւն և ազատութիւն էր փչում նրա բմահաճօրէն
ցիր ու ցան եղած մազերից։ ճանկերը դուրս հանող գիշատիչ
կինդանու վայելեչութեամբ չնչում էին նրա բոլոր վառվուն
շարժուածքները համոզուած, թեթեւ, անազմկալի, և ձեռները
առանց տատանուելու դժուում և վերցնում էին այն, ինչ որ
հարկաւոր էր նրանց կարծես չը համանալով իր դրութեան
անյարմարութիւնը, նա ամեն մէկի աչքերում նայում էր խոր և
հանդարտ, բայց նոյն իսկ այն բոպէին, երբ նրա հայեացքը
փայփայիչ էր, նրա մէջ նկատում էր ինչ որ զազտնի ու եր-
կիւղալի բան, ինչ տեսնուում է միշտ փաղաքչող գիշատիչի աչ-
քերում։

Եւ խօսում էր նա հրամայողական ձեւով ու հասարակ։
ինչպէս երեւում էր չը խորհնելով իր խօսքերի մասին, կարծես
դրանք սիալական, մարդկային բանականութեան ակամայ ստող
ձայներ չը լինէին, այլ անմիջապէս ինքը միտքն էր ձայն բարձ-
րացնում։ Զղջումի զգացմունքը չէր կարող տեղ ունենալ այդ-
պիսի մարդու սրտում։

Բայց եթէ դա արծիւ էր, նրա փետուրները շատ սաստիկ
էին արորուած կոռուի մէջ, որից նա դուրս էր եկել բոլորովին
ոչ իբրեւ յաղթող. դրա մասին խօսում էին նրա շորերը, որ
կրում էին իրանց վրայ գիշերելու հետքեր, կեղտոտ էին ու
մարմնի կազմուածքին անհամապատասխան։ և կար այդ շորերի
մէջ մի ինչ որ անըմբնելի գիշատիչ, շփոթ բան, որ բոլոր լաւ
հագնուած մարդկանց զգացնել էր տալիս երկիւղի երկչուա
զգացմունք։ Եւ բոպէներով ամբողջ նրա ուժեղ և գեղեցիկ
կազմուածքով տարօրինակ սարսափի ակնթարթային սարսուռ
էր անցնում։ այդ ժամանակ ամբողջ մարմինը կարծես նսեմա-
նում էր և կարծես ծոծրակի վրայ մազերը բարձրանում էին,
ինչպէս որ ցից ցից են դառնում կենդանու վրայ։ Եւ աչքերը
արագ ու չար շրջում էին բոլոր ներկայ եղողների վրայ։ Ամում
էր և ուտում էր նա ազահութեամբ, ինչպէս մի մարդ, որին
պատահելիս է եղել երկար քաղցած լինել կամ որը միշտ ա-
խորժակից պակաս է ուտում և այդ պատճառով պատրաստ է
ամեն բոպէ ուտել և այն ամենը, ինչ որ սեղանի վրայ դրուած
է։ Վերջացնելով նա ասաց. «Երեւելի է»—և մի քիչ հեգնաբար
ձեռքը քսեց փորին։ Մերժելով հօր սիզարը, նա վերցրեց ու-
սանողից պապիրոսը—նա ինքը նոյն իսկ պապիրոս չունէր—և
հրամայեց՝ պատմեցէր։

Պատմել սկսեց Նինօչկան այն բանի մասին, թէ ինչպէս

Էր աւարտել ինստիտուտը, և ինչպիսի կեանք էր վարել նա այնտեղ, Առաջ նա երկշու էր, բայց յետոյ, որովհետեւ նա պատմում էր այն, ինչի մասին մի քանի անգամ ուրիշներին պատմել էր, նա հեշտութեամբ մոսաբերեց բոլոր սրամիտ խօսքերը և շատ գոհ էր իրանից: Նիկողայոսը լսում էր թէ չէր լսում, անորոշ էր, նա ծիծաղում էր, բայց ոչ միշտ այն տեղերում, որտեղ սրամիտ խօսքեր կային, և բոլոր ժամանակ սենեակն էր զիտում իր դուրս ընկած աշքերով: Մերթ նա խանգարում էր խօսակցութիւնը անտեղի հարցերով՝ «Ի՞նչ ես տուել պատկերին—հարցրեց նա լուր և մի քիչ հեգնական ժպտող հօրը»:

—Զեմ յիշում:

—Երկու հազար—յարգանքով դէպի փողը ձայն տուեց մինչև այժմս լուռ Անսա Խվանօվսան և վախենալով նայեց Ալեքսանդր Սնատօնօվիչի վրայ:

Եւ երկումն էլ ժպտացին—հայրը և Նիկողայոսը, և ժպիտի մէջ մի ինչ որ թշնամական բան սլաց: Հիմա Ալ. Անդիչն էլ չէր շփոթւում և այդ պատճառով նա դարձաւ խիստ և ծանրաբարոյ:

—Գործերը ինչպէս են.—Նոյնակէս կարճ հարցրեց Նորը:

—Ոչինչ, զնում են:

—Նոր տուն են զնել իտալական փողոցի վրայ, եռյարկանի և մի գործարան էլ է զնել,—համարեա շշուկով արտասանեց Անսա Խվանօվսան: Նա վախենում էր Ալ. Անտօնօվիչից, բայց չը կարողացաւ զսպել իրան, որովհետեւ միշտ զբաղուած էր այն բանով, որ համեմատում էր խնայողական զրամարկղում իր ունեցած փողը—556 ո., պ. Բարսուկօվի զրամագլխի հետ, որ ունէր աներ, զործարաններ և արժէթղթեր:

—Դէհ, Նինօչկա, շարունակիր,—ասաց Նիկողայոսը:

Բայց Նինօչկան արգէն վազուց ձանձրացել էր. կրկին նրա կողքը ծակեց և նա նստած էր նիհար, գունատ, համարեա թափանցիկ, բայց թառամել սկսող ծաղկի նման տարօրինակօրէն գեղեցիկ և սրտառուչ: Եւ բուրում էր նրանից մի ինչ որ օտարոտի անուշահոտութիւն, որ յիշեցնում էր գեղնող աշունը և գեղեցիկ մահացումը: Ամօթխած, չեշոտ ուսանողը ուշադրութեամբ զիտում էր նրա յետեւից և նոյնպէս, կարծես, գունատում էր այն ժամանակ, երբ գոյնը թռչում էր Նինօչկայի երեսից: Նա բժիշկ ուսանող էր: Նա սիրում էր Նինօչկային առաջի սիրով:

Բայց այստեղ ներկայացաւ մենօքեն Խվանօվիչը: Ճեր

սպասաւորը։ Նրա դէմքը դմներից գուրս ցցուեց ինչպէս նոր ծագող արև և նոյնպէս լայն, կարմիր ու անմազ Նա բաղանիշքումն էր, բաղանիքից յետոյ քիչ կոնծել էր, և տուն գալով իմացել էր աղախնից այն որդու գալու մասին, որի հետ երբեմն ձի էր խաղացել։ Օդից թէ ուրախութիւնից քիչ լադ լինելով նա հագաւ մի կերպ իր քրակը, օճեց իր անմազ գլուխը անուշահոտութեամբ, ինչպէս այդ անում էր իր աղան և ծանր ծանր գնաց սեղանատունը։ Դռան յետու մի քիչ կանգ առաւ նա և հանդիսաւոր ուսեցնելով իր թշերը, ինչպէս որ նահանգապետի գալու ժամանակն էր անում, նա ներկայացաւ Նիկողայումն։

—Ֆինօգենկա, —ուրախ բացականչեց Ն-սը, և նրա ձայնը հնչեց ինչպէս երեխայի ձայն։

—Փոքրիկ աղջա, ձիչ արձակեց ֆինօգենը և վայր ձգելով աթուները, վաղեց դէպի Ն-սը։

Նա առաջ ուզում էր համբուրել նրա ուսը, բայց որովհետեւ Ն-սը զրա տեղ, սեղմեց նրա ձեռքը, ֆինօգենը ծանր յետ քաշուեց և պատախանեց ամուր սեղմումով։ Նա թոյլ էր տալիս իրան մտածել թէ ինքը-ծառայ չէ, այլ Նիկողայոսի ընկեր—բարեկամ և ուրախ էր հրապարակական խոստովանութեան համար նրա այդ առաւելութեան մէջ։ Բայց համբուրել անուամենայնիւ հարկաւոր էր։

—Եւ նոյն իսկ հարբած է—զգալով օղիի հոտը ասաց ուրախութեամբ Նիկողայոսը, զարմանալով ֆինօգենի սովորութիւնների հաստատութեան։

—Միթէ, —խստութեամբ արտասանեց Ալեքսանդր Անտօնօվիչը։

Բացասական ձեռվ շարժերով գլուխը, Ֆ-Նը քաղաքավարի յետ էր քաշում առանց շուռ գալու և աչքերը չոռմէր իմանալու համար թէ ուր է գուռը, բայց այնուամենայնիւ նախ նա զիպաւ պատին և յետոյ ձեռքով ուզգուելով հասաւ զունը։ Այս բոլորը բաւական երկար ժամանակ իրեց, Նախասենեակում Ֆ-Նը կանգ առաւ, քնքութեամբ նայեց ձեռքին, որ սեղմել էր Ն-սը, և տանելով ձեռը իրանից առաջ ինչպէս մի տեսակ բոլորովին տարբեր զիւրաբեկ ու թանկագին բան, անցաւ ծառաների սենեակ։ Առհասարակ նա իրան յարգում էր, բայց այդ բոպէին իր մարմնի ամենապատւելի մասն էր աջ ձեռքը։

Այդ օր Ալեքսանդր Անտօնօվիչը չը գնաց ծառայութեան և ձաշից յետոյ, երբ խմել էր բաւական շատ զի՞փ, փափուկ և պարզ տրամադրութեան մէջն էր գտնւում։ Գրկելով Նիկողայու

սին նա տարաւ նրան գրադարան, ծխեց սիզար և պատրաստուելով երկար լսելու բարեսրտութեամբ ասաց.

—Ապա հիմա պատամիր, ուր էիր, ինչ էիր շինում:

Նեկողայոսը պատասխանեց ոչ խկոյն: Նրա մարմնով կրկին անցաւ նոյն վախսի օտարութի սարսուռը ու աչքերը ուղղուեցին գէպի դռները, բայց ձայնը հանգիստ և լուրջ էր մնում:

—Ոչ, հայր, ես ինդրում եմ քեզ թողնել խօսակցութիւնը իմ արկածների մասին:

—Ես տեսայ մօտդ արտասահմանում պատրաստուած մի քսակ: Դու եղել ես արտասահմանում:

—Եղել եմ—կարճ պատասխանեց Ն-ար,—բայց բաւական է, հայր:

Ալեքսանդր Անտօնօվիչը յօնքերը կիտեց և կահաւորակից վեր կացաւ: Չեռքերը ծալելով մէջքին, միւրտիւկի տակ, հայրը անցաւ սենեակով ու չը նայելով որդու վրայ, հարցրեց.

—Դու էլի մի եւ նոյնն ես:

—Խչպէս տեսնում ես, իսկ դռ, հայր!—Խնչպէս տեսնում ես, գնա ես պէտք է պարապեմ:

Երբ որ Նեկողայոսը դուրս գնաց, Ալեքսանդր Անտօնօվիչը բանալիքով փակեց նրա յետեւից դուռը, յետ նայեց և մօտենալով բուխարուն լուռ, բայց ուժեղ խփեց սպիտակ փայլող աղիւսին. յետոյ սրբեց թաշկինակով ձեռքը, որին կազել էր սպիտակ կաւի կտոր, և ականց պարապել: Եւ կրկին նրա երեսը ծածկուեց այն սարսափելի գունատութեամբ, որ յիշեցնում էր մահը:

Ոչ որ չը տեսաւ Նեկողայոսին մնեծ մօր հետ տեսնուելիս, բայց Ն-ար դուրս եկաւ մօր սենեակից թափսիծով լի և կարծես մի քիչ վրդովուած: Եւ բոպէաբար ամենքը զգացին թեթևութիւն, երբ Ն-ար յետեւ ծածկուեցին նրա սենեակի սպիտակ դռները, բայց այդ բոպէից նա էլ հիւր չէր և այդ բոպէից երեւան եկաւ այն տարօրինակ շփոթը, որ տարածուելով փարակեց ամբողջ տունը: Կարծես տունը մտաւ և մշտական տեղ բռնեց այնտեղ անթափանցելի, երկիւզալի մի մարդ որ աւելի օտար էր, քան փողոցի առաջին պատահած մարդը և աւելի սարսափելի քան թագնուած կողոպատիչը: Եւ միմիայն Ֆենոգենը չէր զգացել այդ, որովհետեւ ուրախութիւնից էլի կոնծեց, և հիմա քնած էր խոնարարի անկողնում և քնած տեղը պահպանում էր ինքնապատութեան ձեւը ամբողջովին ու աջ ձեռքը քիչ յետ էր քաշել:

իսկ հիւրասենեակում Նինօչկան կամացուկ պատմում էր ուսանողին, թէ ինչ էր պատահել Դ տարի առաջ։ Այն ժամանակ Նիկողայոսը մի ինչ որ գէպքի համար գուրս էր վանդուած Տելմնոլոգիական ինստիտուտից իր մի քանի լնկերների հետ։ միայն հօր կապերն ազատել էին նրան մեծ պատժից։ Տաք բացատրութեան ժամանակ զիւրագրգիտ Ալեքսադր Սնտօնօվիչը խփել էր նրան, և նոյնիսկ երեկոյեան Նիկողայոսը թողել էր տունը, և վերագրածաւ միայն այսօր։ Եւ երկումն էլ՝ պատմողը ու լսողը՝ զլուխները տատանում էին և ձայները ցածացնում, և ուսանողը Նինօչկային քաջալերներ համար վերցրեց նրա ձեռքը և փայփայում էր նրան։

II

Նիկողայոսը ոչ ոքին չէր խանգարում։ Ինքը քիչ էր խօսում և ուրիշներին լսում էր ոչ թէ ակամայ, այլ մի տեսակ գոռող անտարբերութեամբ, իբրեւ թէ առաջուց գիտէր, թէ ինչ կարող են նրան պատմել, Պատմութեան կիսում նա երբեմն գուրս էր գնում, և բոլոր ժամանակ նրա երեսը այնպիսի արտայայտութիւն ունէր, կարծես նա ականջ էր գնում մի ինչ որ հեռաւոր շատ վսեմ և իրան միայն լսելի բանի։ Նա ոչ ոքին չէր ծաղրում և ոչ նախատում, բայց երբ գուրս էր գալիս գրադարանից, որաեղ անց էր կացնում օրուայ մեծ մասը և անուշադիր թափառում էր ամբողջ տան մէջ, մանելով ծառաների սենեակը, քրոջ մօտ, ուսանողի մօտ—նա տարածում էր սասանութիւն բոլոր իր ճանապարհին—և մարդկանց մտածել էր տալիս այնպէս, իբրեւ թէ ահա այս բոսէիս մի որ և է շատ վատ բան, նոյնիսկ ոճրագործութիւն են արել և նրանց դատի կ'ենթարկեն ու կը պատժեն։ Հիմա, նա հագնուած էր շատ լաւ, բայց այդ նուրբ շորի մէջ նա չէր ձուլուել սենեակների շքեղ հարստութեան հետ, այլ կանգնած էր առանձին, ինչպէս մի ինչ որ օտարոտի և թշնամի բան։ Եւ եթէ այդ բոլոր թանկագին իրերը կարող լինէին զգալ ու խօսել, նրանք կ'ասէին, թէ մեռնում են սարսափից, երբ որ Ն-ոը մօտենում էր նրանց կամ վերջնում ձեռքին նրանցից մէկը և զիտում տարօրինակ հետաքրքրութեամբ։ Նա երբէք ոչինչ չէր վայր ձգում և զնում էր իրերը այն տեղ, իսկ այն տեսակ, ինչ տեսակը իրը զասաւորուած էր, բայց կարծես նրա ձեռքի հպումը խլում էր գեղեցիկ պերճ արձանիկից նրա բոլոր արժողութիւնը և Նիկողայոսի հեռանալուց յետոյ նա կանգնած էր դատարկ և ամեն բանի անպէտք։ Այդ իրի արուեստից ներհնչուած ողին

հալում էր Նիկողայոսի ձեռքերին և մնում էր միայն բրոնզի կամ կաւի անգէտք կտոր, Մի անգամ Ն-ուը եկաւ Նինօչկայի մօտ նրա նկարչութեան դասի ժամանակ, երբ որ նա մեծ նմանութեամբ և լաւ արտանկարում էր մի պատկերից—ողորմութիւն ուղղող աղքատի դէմք:

—Նկարիր, Նինա, ես խանդարելու չեմ քեզ,—ասաց Ն-ուը, նստելով մօտը ցածր թախտի վրայ: Նինօչկան երկշու ժպտաց և մի առժամանակ շարունակում էր շարժել վրձինը, վերցնելով ոչ այն գոյները, որ հարկաւոր էին Յետոյ թողեց և ասաց.

—Ես յոդնեցի, հաւատում ես:

—Այո, լաւ է, դու լաւ էլ նուագում ես,

Այդ սառը գովասանքից շուտ տպաւորուող Նինան ձանձրացաւ. նա քննադատաբար մի կողմ ծուելով զլուխը, դիտեց իր նկարը, հոգոց քաշեց և ասաց. «Խեղճ աղքատ. ես այնքան խղճում եմ նրան, դու էլ ես խղճում».

—Հա, ես էլ:

—Ես մամնակցում եմ աղքատներին խնամող երկու ընկերութիւններին. սարսափելի շատ գործ կայ, —տաք-տաք վրայ բերեց օրիորդը:

—Ի՞նչ էք դուք անում այնտեղ, —անտարբեր հարցրեց Ն-ուը:

Նինօչկան սկսեց պատմել մանրամանաբար, յետոյ աւելի կարճ, յետոյ բոլորովին կանգ առաւ: Ն-ուը լուս էր և թերթում էր ալբոմը, որտեղ Ն-չկայի ծանօթները զրում էին բանաստեղծութիւններ:

—Ես ուզում էի բարձր կուրսերը մտնել, բայց հայրս թոյլ չէ տալիս, —յանկարծ ասաց Նինօչկան, կարծես որոնելիս մնէր ձանապարհ դէպի եղրօր ուշադրութիւնը:

—Լաւ գործ է—և ի՞նչ:

—Թոյլ չէ տալիս հայրիկը, բայց ես կը հասնեմ ուզածիս:

Ն-ուը հեռացաւ, իսկ Ն-չկայի կուրծքին տիրեց զատարկութիւն ու թախիծ: Նա դէն շվրտեց ալբոմը, տիսուր նայեց սկսած նկարին, որ նրան թուած զգուելի և անպէտք քսուածք: Զիմանալով զսպել իր ձգտումները, Ն-ն վերցրեց վրձինը և խաչածե զիծ քաշեց կտաւի վրայ կապոյտ գոյնով և աղքատի կէս գլուխը ջնջեց: Առաջի օրից, երբ Ն-ուը սեղմեց նրա ձեռքը, նա սիրեց նրան, իսկ Նիկողայոսը ոչ մի անգամ չէր համբուրել նրան, եթէ նա համբուրէր, Նինօչկան բայց կ'անէր նրա առաջ իր ամբողջ փոքրիկ, բայց արդէն շատ ցաւ տեսած սիրութ, որտեղ մերթ երդում էին փոքրիկ ուրախ թռչնիկներ, մերթ աև ագռաւներ էին կոկում, ինչպէս զրում էր նա իր օ-

րաթերթի մէջ: Օրաթերթն էլ կը տար եղբօրը, իսկ նրա մէջ ամեն մի երեսի վրայ պատմում է, թէ ինչպէս նա ոչ անպէտք և անբախտ արարած է: Նիկողայոսը կարծում էր թէ քոյրը բաւականութիւն է զգում իր նկարչութիւններից էլ, երաժշտութիւնից էլ, աղքատախնամ ընկերութիւններից էլ, բայց սիսալում էր: Նրան հարկաւոր չէր ոչ նկարչութիւն, ոչ երաժշտութիւն, ոչ աղքատախնամ ընկերութիւն:

Ծիծաղում էր Նիկողայոսը միայն ուսանողի դասատրութիւնների ժամանակ, և Պեթկան ատում էր նրան ծիծաղի համար. Նրա Ներկայութեամբ Պեթկան զիտմամբ աւելի բարձր էր պահում իր ծնկները, այսպէս որ քիչ էր մնում վայր ընկնի աթոռի հետ մէջքի վրայ, արհամարհանքով լվացնում էր աշքերը, մատը քթից չէր հեռացնում, թէպէտ շատ լաւ իմանում էր, որ այդ չը պէտք է անել: Նա ուսանողին սասնասիրտ առում էր անտանելի յանդկնութիւններ: Ռեպետիտօրի չեչոտ երեսը արիւնով էր լրցում և քրտնում: Նա քիչ էր մնում լաց լինէր և Պետիայի հեռանալուց յետոյ գանգատում էր, թէ երեխան բոլորովին չէ ուզում սովորել: «Զեմ իմանում, ինչ է դուրս գալու նրանից,—ասում էր ուսանողը,—ահա հիմա աղախինն էլ էր գանգատում ինձ թէ Պեթկան նրան պիղծ բաներ է ասում»:

—«Անպիտան կը դառնայ»—առանց նկատելի տիրութեան որոշեց Նիկողայոսը եղբօր ապագան:

—«Աշխատում ես, հոգիդ դուրս է գալիս, ջղերդ գրգռում ես, բայց ի՞նչ օգուտա. քիչ էր մնում լաց լինէր ուսանողը, իր անարգութեան և ամօթի երկար շարքը մտաբերելիս, երբ նա ուզում էր գետինը մտնել կամ ծեծել աշակերտին:

—Թողէք:

—Իսկ ուտել պէտք է—յուսահատ բացականչեց Ալեքսէյ Եգօրօվիչը:

—Դէհ. կերէք—ինչ որ մօտ են բերում:

Բայց ուսանողի հետ Նիկողայոսը չէր մտնում վիճաբանութիւնների մէջ, թէպէտ ուսանողը աշխատում էր, և Նիկողայում և Ալեքսանդր Եգօրօվիչը շուտ շուտ փորձեր էին անում վճռելու, թէ ինչ է ներկայացնում եղբայր Նիկողայոսը և հասնում էին այնպիսի ֆանտաստիկ պատկերների, որ երկուսին էլ ծիծաղելի էր դառնում: Բայց հեռանալով միմեսանցից նրանք զարմանում էին իրանց ծիծաղի վրայ, և ամենափանտաստիկ և նթաղրութիւններ անգամ թւում էր նրանց իսկական, ճշմարիտ, և միւս օրը երկուսն էլ ահով և բուռն հետաքրքրու-

թեամբ սպասում էին Նիկողայոսի երեալուն, մտածելով, թէ
այսօր իսկ կը գնուի ձանձրալի խնդիրը:

Բայց Նիկողայոսը երևում էր, իսկ իննդիրը մնում էր նոյն-
պէս հեռու վճռուելուց:

Մանաւանդ գունաւոր և անհաւանական էին այն եղբա-
կացութիւնները, որ անուում էին ծառաների սենեակում, և
պատմողներից ամենաառաջին տեղն էր բռնում ֆենօգեն իվա-
նովիչը: Երբ որ նա քիչ կոնծում էր՝ րանց երեակայութիւնը
գործում էր անարգել և ստեղծում էր այնպիսի պատկերներ,
որոնց առաջ նա ինքը կանգ էր առնում սարսափած և տարա-
կուսուած: «Ես—աւազակ է»—ասայ մի անգամ ֆենօգեն
իվանովիչը և նրա կարմիր երեսը սարսափից գունատուեց:

—Ելի ի՞նչ, աւազակ,—ըստ հաւատաց խոհարարը, բայց նոյն-
պէս յետ նայեց գուն կողմը:

—Որ կողոպտում է միայն հարուստներին, —ուղղեց ֆե-
նօգեն իվանովիչը, երբեմն իմացած լինելով ինքը Նիկողայոսից
գեռ երեխայութեան ժամանակ, որ լինում են այդպիսի աւա-
զակներ:

—Ի՞նչ հարկաւորութիւն կայ կողոպտել, քանի որ հայրը
անհամար փող ունի, —կասկածեց կառապանը, մի շատ հիմ-
նաւոր մարդ: «Երեք գործարան, չորս տուն, ամեն օր ակցիա-
ներ են կտրում»—փսխաց Աննա իվանովսան, որ հիմա
զրամարկվում ունէր ուղիղ 560 ռուբի, որովհետեւ 4 ռուբլին
այս օրերս էր մտցրել ֆենօգենի ենթագրութիւնը փուլ եկաւ:
Աննա իվանովսան վիճակը էր Նիկողայոսի բոլոր իրերի մէջ և
ոչինչ չէր դտել բացի սպիտակեղինից, իսկ այդ հանգամանքը,
որ ոչինչ չէր դտել բացի սպիտակեղինից, ամենից շատ էր
զախեցնում նրան և շփոթեցնում: Եթէ չնմօդանում գտնուէր
հրացան, փամփուշտ զանակներ և Նիկողայոսը իսկապէս աւա-
զակ լինէր, կը լինէր ոչ այնքան սարսափելի, քան բոլորովին
չը գիտենալ այն մարդու պարապմունքներն, որ այնքան նման չէ
ուրիշներին երեսով և շարժուածքով, լսում է, բայց ինքը չէ
խօսում ու նայում է բոլորի վրայ դահճի պէս: Երկիրով մե-
ծանում էր և անցնում մասպաշտ սարսափի, որ սառ ալիքնե-
րի նման տարածում էր տան մէջ: Լսուած էր Նիկողայոսի մի
կարճ խօսակցութիւնը հօր հետ, զա չը փարատեց ահը, այլ աւել-
լի թանձրացրեց տարակուսանքի և հանելուկի թխպոտ մթնո-
լորով:

—Դու մի օր ասացիր, թէ ատում ես բոլոր մեր կեանքը,
—ամեն մի խօսք առանձին շեշտելով, հարցնում էր հայրը,—
դու հիմա չէ ատում ես մի և նոյնը:

Նոյնպէս շեշտուած և հանդարտ էր հնչում Նիկողայոսի լուրջ պատասխանը.

—Այս, ես ատում եմ նրան վարից մինչեւ նրա ամենասարձր կէտք. ատում եմ ու չեմ հասկանում:

—Դու գտել ես աւելի լաւը:

—Այս, գտել եմ, այս գտել եմ,—հաստատ կրկնեց Ն-սը:

—Մնացիր մեզ հետ:

—Դա անմիտ է, հայր, և դու այդ գիտես:

—Նիկողայնս, թնդաց Ալեքսանդր Անտօնօվիչի բարկացած բայականչութիւնը: Եւ լարուած լուռթեան մի բոպէից յետոյ Նիկողայոսի ցածր և մի քիչ տիսուր պատասխանը.

—Դու էլի նոյն ես, հայր—դիւրագրգիռ ու բարի:

Քրիստոսի ծննդեան տօնը հկաւ այդ հարուստ տան մէջ անուրախ և շփոթ: Սյն մարդու ներկայութիւնը որ ոչ մի բանում չէր համաձայնուում իրան ըրջապատող մարդկանց մտքերի ու զգացմունքների հետ, մոռայլ մթնոլորտով պատմում էր բոլորին և տօնից խլում էր ոչ միայն նրա ուրախ բնաւորութիւնը, նոյն իսկ նրա իմաստը կարծես, ինքը Նիկողայոսը նկատել էր, թէ որքան նա ծանր է ուրիշների համար և համարեա, դուրս չէր գալիս իր սենեակից, —բայց աչքից հեռու նա աւելի զարհուրելի էր թւում, քան ներկայ լինելու ժամանակ: Ծննդեան տօնից մի քանի օր առաջ Բարսուկօվների մօտ հաւաքուել էին հիւրեր. Նիկողայոսը դուրս չեկաւ առաջ, ինչպէս առհասարակ դուրս չէր գալիս կողմնակի մարդկանցից ոչ մէկի առաջ, և հագնուած պառկած էր անկողնի վրայ և լսում էր երաժշտութեան հնչիւնները:

Հնչիւնները պատի հաստութիւնից նսեմացած թւում էին ներդաշնակ ու քնքովչ, ինչպէս մաքուր ու անմեղ ձայնների երգը հեռուից, և այնքան մեղմ թափանցում էր ականջները, որ կարծես երգելիս լինէր ինքը ողբ: Ն-սը ուշագրութեամբ լսում էր և մտաբերում այն ժամանակը, երբ նա դեռ փոքրիկ երեխայ էր և նրա մայրը կենդանի էր, և նրանց մօտ հաւաքուել էին հիւրեր, իսկ նա նոյնպէս հեռուից լսում էր երաժշտութիւն և երազում էր, —թէ պատկերներ, այլ մի ինչ որ ուրիշ բան, որի մէջ և պատկերները և հնչիւնները խառնուում էին մի փայլուն և չարատանն զեղեցիկ երեւոյթի մէջ, և այդ երեւոյթը ոլորւում էր իբրև մի բազմագոյն երգող ժապաւէն: Եւ նա հասկանում էր այն ժամանակ, թէ ինչ էր նշանակում այդ փայլոյթը, —բայց ոչ ոքին չէր կարողացել բացատրել, նոյն իսկ իրան, և աշխատում էր միայն երկար չը քննել—և քնում էր: Մի անգամ նա քննել էր այդպէս ոչ ոքից չը նկատուած, նախա-

սինեակում մուշտակների վրայ, և հիմա նրան պարզ երեւաց խաւոտ մորթիի հոտը, եւ նորից անհասկանալի սարսափի սարսու անցաւ նրա մարմեռվ սառը ասեղների մնան, բայց և մի ուրիշ բան էլ, աւելի քնքոյց և ջերմ լուսաւորեց նրա երեսը և, կարծես, մի քնքոյց փայտայող ձեռք ուղղեց նրա կիտած յօնքերը. երեսը անշարժ դարձաւ, բայց հանգարտ, հեզ ու անոխակալ ինչպէս մեռելի երես: Չէր կարելի ըմբռնել արթուն է նա՝ թէ քնած, կենդանի է՝ թէ մնուած, բայց կարելի էր ասել միայն՝ որ այդ մարդը հանդստանում է: Եկաւ Ծննդեան նախընթաց երեկոն, և արդէն վերջալոյան ներկողայոսին ներկայացաւ ֆենոգեն իվանօվիչը: Նա համարեա խմած չէր, մոայլ ու միւս կողմն էր նայում, իսկ աչքերի վրայ նկատուում էր կարծես արտասուբների հետքեր,

—Ծնորհ բերէք մնծ մօր մօտ, —ասաց նա դռների արանքից:

—Ի՞նչ կայ, զարմացաւ Ն-աը: Ֆենօգեն իվանիչը հոգոց քաշեց և կրկնեց. «Ծնորհ բերէք մնծ մօր մօտ»:

Ներկողայոսը բարձրացաւ վերեւ և հաղիւ էր մտել դռների չէմքը, երբ երկու բարակ կուսական ձեռներ փաթաթուեցին նրա պարանոցից. երեսին մօտեցաւ քնքոյց երես լայն բացած խոնաւ աչքերուի և հեկինանքից չնչասպառ ձայնը փսփսաց. —«Կօլեա, Կօլեա, ինչքան դու մեզ չարչարեցիր. Կօլեա, Կօլեա, սիրելիս, հաշտուիր հայրիկի հետ, և ինձ հետ. և մնա մեզ հետ, Կօլեա, Կօլեա»:

Եւ փոքրիկ գողգողացող մարմինը երերուում էր նրա ձեռներում և փոքրիկ սրտիկը զարձաւ այնքան ահազին, որ նրա մէջ կը մանէր ամբողջ տանջուող աշխարհը:

Ներկողայոսը կնճռուած յօնքերի տակից հայեացք դարձեց ամեն կողմէ: Անկողնից զէպի նրան էին մեկնուում մնծ մօր անարիւն նիհարութեամբ ահ աղդող ձեռները, և ձայնը, որի մէջ արդէն լսելի էր ուրիշ կեանքի ձայնակցութիւն, լսովոտ արտասուող հնչիւնով աղաչուում էր. «Կօլեա, Կօլեա»: Իսկ գուն չէմքին լսիս էր Ֆենօգեն իվանօվիչը. Նա կորցրել էր իր բուլոր վանմութիւնը և քթից ձայներ էր հանուում և բերանով ու յօնքերով շարժումներ էր դործուում, և արտասունքները այնքան շատ էին, այնպէս յորդառատ էին հոսուում նրա երեսից, կարծես աչքերից չին թափւում, ինչպէս բոլոր մարդկանց մօտ, այլ հոսուում էին մարմինի բոլոր ամենամանը ծակերից:

—Բարեկամս, Ներկողնկա, փսփսում էր նա աղերսելով առաջ մեկնելով ձեռները կարմիր թաշկինակի հետ: Ներկողայոսը անօդնական և խղճալի ժպտում էր, չիմանալով, որ նրա արծի-

ւային աչքերից թափում էր հազուագիւտ ժլատ արտասուք-ներ:

Եւ այդ ժամանակ մութ անկիւնից դէպի լոյս երեւաց պառաւային գողով երերուող անզօր գլուխը այն մարդու, որ նրա հայրն էր և որի ամբողջ կեանքը նա ատում էր և չէր հասկանում:

Բայց հիմա նա հասկացաւ.

Սիրոյ նոյն խելացնորութեամբ, որով նրա ատելութիւնն էր թափանցել, Նիկողայոսը վրայ ընկաւ դէպի հայրը, հետք տանելով Նինօչկային, և բոլոր երեքն էլ կուտակուած մի կենդանի բումնի (կաորի) մէջ, իրանց սրտերը բացած, շնցուած նրանք մի ակնթարթում դարձան մի սիրտ և մի հոգի ու նեցող մի մեծ էակ:

—«Մնաց—խոպստ ձայնով ասում էր ծերուկը—մնաց»,

—«Բարեկամս, Նիկոլենկա, փափսում էր Յմնօդեն Իվանօվիչ:

«Հա, հա—ասում էր Նիկողայոսը, չը հասկանալով թէ ունի է պատասխանում և ինչ հարցին,—հա, հա—կրկնում էր նա, համբուրելով գողացող ծերացած ձեռքը, որը անխօս քնքշութեամբ փայփայում էր նրա գլուխն ու երսու...

—Հա, հա—էլի արտասանում էր նա, արդէն զգալով ինչպէս նրա հոգու մէջ աճում է սպառնալի, անգութ, կարճ և բթածայր ռոշը:

Արդէն զիշեր էր մօտենում, և ամբողջ մեծ տունը, սկսած ծառաների սենեակից և վերջացնելով աղաների սենեակներով ուրախ ճրագալոյսերով էր փայլում: Մարդիկ զուարթ խօսում էին և աղմէկալի միմեանց ձայն տալիս, և փոքրիկ, թանկագին, զիւրաբեկ ու անպէտք իրերը արդէն չէին զախենում իրանց համար. նրանք հպարտ ու անվախ հանդէս էին գնում իրանց գեղեցկութիւնը և բոլորը կարծես այդ տան մէջ ծառայում էր նրանց և խոնարհում թանգ արժողութիւն ունեցող նրանց գոյցութեան առաջ: Ալեքսանդր Անտօնօվիչը, Նինօչկան և նոյն իսկ ուսանողը էլի նստած էին սենեակում մեծ մօր մօտ և մերժ խօսում էին բախտաւորութեան մասին, մերթ լուս, իրանց լսողութիւնը դարձնում էին դէպի նա:

Յենոգեն Իվանօվիչը, էլի մի քիչ կոնծելուց յետոյ, դուրս եկաւ բայց օգ՝ իր գլուխը մի քիչ թարմացնելու նպատակով և այն ժամանակ երբ նա ձեռքերը քսում էր կարմիր անմաղ գըլ-խին, որտեղ ձիւնի մասնիկները հալում էին, նա զարմացած տեսաւ Նիկողայոսին: Զեռքն բռնած փոքրիկ կապոց ն-սը գա-

լիս էր այն անկիւնի կողմից, որտեղ տան յեռքի անցքն էր, և նոյնպէս անախորժ զարմացած էր Ֆ. Խ-ը տեսնելուց:

—Ա՛, Ֆենոգեշկա... ցածր ասաց նա,—ապա ճանապարհ ձգիր ինձ մինչեւ դռները:

—Քարեկամս, իրան կորցրած փափում էր Ֆ. Խ-ը,

—Լոիր. այնտեղ կը խօսենք,

Փողոցը այդ պահուն ամայի էր և նրա երկու ծայրերը կորչում էին հանդարտ և անաղմուկ թափուող ձիւնի սպիտակախան մթութեան մէջ, Կանգնելով ֆենոգեն իվանովիչի առաջ և ուղիղ աչքերին նայելով իր ուռուցիկ փայլող աչքերով, Նիկողայոսը ձեռքը զբեց նրա ուսին և հանդարտ ասաց, կարծես սովորեցնելիս լինէր երեխային.

—Ասա հօրս, որ Ն-ս Ալեքսանդրովիչը պատուիրեց ողջունել և ասել թէ նրանք գնացել են:—Շմէրը.

—Հասարակ—գնացել են—մնաս բարեւ: Ն-սը մտերմասը զարկեց սպասաւորի ուսին և հեռացաւ նրանից: Բայց ֆենոգեն իվանովիչը առանց խօսքերի էլ զիտէր, թէ ուր է գնում Ն-սը և բոլոր ոյժով, ինչ որ ձեռքերի մէջն ունէր, բռնեց նրան:

—Թողնելու չեմ. Աստուած վկայ, չեմ թողնելու:

—Նիկողայոսը յետ մղեց նրան և զարմացած նայեց: Իսկ ֆենոգեն իվանովիչը ինչպէս աղօթելու ժամանակ ծալելով ձեռքերը խնդրում էր լալկան ձայնով. «Նիկոլենկա, միակ բարեկամը, զիտացէք, միք երթալ Տներ, ակցիաներ ամեն օր կտրում են»—անմիտ կրկնում էր նա տանտիրուհու խօսքերը:

—Ի՞նչեր ես բրդում.—յօնքերը կիտեց Նիկողայոսը և արագ առաջ գնաց:

Իսկ ֆենոգեն իվանիչը, նոր փրակի մէջ բոլորովին տօնային կերպարանքով և ամբողջովին քայլայուած ու կարծես արրուած վաղում էր նրա յետեւից, բռնում էր ձեռքերից և աղաջում.—ապա ես էլ, ինձ էլ տարէք. բա ինձ, Աստուած վկայ, սիրելիս, աւազակ դառնալու ենք,—գառնամնք: Եւ ֆենոգեն իվանիչը յուսահատ թափ տուեց ձեռքը վերջին հրաժեշտ տալով աղիւ մարդկանց աշխարհին:

Նիկողայոսը կանգ առաւ ու լուռ նայեց սպասաւորին, և այդ հայեացքի մէջ փայլեց մի ինչ որ այնպիսի սարսափելի, սառը, կատաղի ու վտանգաւոր բան, որ ֆենոգեն իվանովիչի լեզուն պապանձուեց և ոտները գետնին կպան: Նիկողայոսի բարձր կերպարանքը գորշանում էր և փոքրանում, կարծես հալուելով մոխրադոյն մթութեան մէջ: Էլի մի բոպէ և նա մըշ-

տապէս կորաւ այն մութը չարագուշակ հեռաւորութեան մէջ, որտեղից անսպասելի կերպով երեւացել էր, Եւ արդէն ոչինչ կենդանի չէր երեւում մարդազուրկ տարածութեան մէջ, իսկ Ֆենօքեն Իվանօվիչը Էլի կանգնած էր ու նայում էր, Օսլայած շոպկի օձիքը խոնաւացել էր և կպել պարանոցին. Ճիւնի մասնիկները կամաց կամաց հալւում էին նրա կարմիր, սպած, անմաղ զլիսին և արտասույների հետ հոսում էին սափրած լայն երեսից:

Թարգմ. Բժ. Յ. Տէր-ԴԱՀԹԵԱՆ